### *1.2.2. Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-նոյեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 412.5 մլրդ.դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցել է 14.3%-ով: 2004թ. նոյեմբերի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է. հոկտեմբերի 58.5%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ուղղությունների ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 259.4 մլրդ. դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը 19.2%-ով: Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է բոլոր գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի ծավալների ավելացմամբ: Առավել բարձր համախառն բերքի աճ են ապահովել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերը՝ 147.3 հազ. տոննա կամ 47.5% և խաղողը՝ 66.2 հազ. տոննա կամ 81.1%:

Անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 153.1 մլրդ. դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը 6.7 %-ով:

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներ)*

| | Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)[1],հազ. տոննա | | Արտադրվել է կաթ, հազ. տոննա | | Արտադրվել է ձու, մլն. հատ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2004թ. | 2004թ. 2003թ. նկատմամբ,% | 2004թ. | 2004թ. 2003թ. նկատմամբ,% | 2004թ. | 2004թ. 2003թ. նկատմամբ,% |
| ք.Երևան | 0.4 | 80.0 | 3.7 | 103.0 | 42.0 | 76.9 |
| Արագածոտն | 8.7 | 106.1 | 62.7 | 107.7 | 25.9 | 104.4 |
| Արարատ | 7.1 | 104.4 | 40.5 | 107.4 | 39.2 | 108.9 |
| Արմավիր | 8.6 | 108.9 | 35.1 | 108.0 | 37.7 | 107.7 |
| Գեղարքունիք | 12.5 | 101.6 | 96.5 | 108.2 | 38.8 | 112.5 |
| Լոռի | 8.0 | 103.8 | 64.0 | 108.1 | 27.9 | 135.4 |
| Կոտայք | 8.1 | 103.8 | 55.5 | 108.4 | 232.0 | 129.2 |
| Շիրակ | 11.0 | 104.8 | 81.3 | 108.3 | 36.0 | 108.8 |
| Սյունիք | 6.7 | 113.6 | 46.1 | 108.5 | 13.9 | 97.9 |
| Վայոց ձոր | 2.8 | 100.0 | 20.5 | 107.9 | 11.8 | 110.3 |
| Տավուշ | 6.0 | 100.0 | 37.3 | 108.1 | 19.4 | 89.8 |
| **Ընդամենը ՀՀ** | 79.9 | 104.6 | 543.2 | 108.1 | 524.6 | 112.9 |

2004թ. հունվար-նոյեմբերին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 3.5 հազ. տոննայով կամ 4.6 %-ով, կաթի արտադրությունը՝ 40.5 հազ. տոննայով կամ 8.1 %-ով, ձվինը՝ 59.9 մլն. հատով կամ 12.9 %-ով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը 2004թ. հուլիս-սեպտեմբերին գյուղատնտեսության ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված միջին հաշվով 201 գյուղական համայնքների 7638 գյուղացիական տնտեսություններում անց է կացրել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն: Հետազոտված տնտեսություններում բերքահավաքի ընթացքում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարա-

[1] *Ներառյալ ներքին սպառումը*

ծություններից կորուստները մեկ հեկտարից կազմել են 121 կգ, որը կազմում է տվյալ տնտեսություններում ստացված հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության 7.0 %-ը:

Ըստ հետազոտության ամփոփ արդյունքների, հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում կորուստները կազմել են մոտ 23.7 հազար տոննա կամ ընթացիկ տարում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի 5.2%-ը: Արձանագրված կորուստների զգալի մասը, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում տեղի է ունեցել հացահատիկահավաք կոմբայնների ֆիզիկական մաշվածության պատճառով:

Օպերատիվ տվյալներով հանրապետությունում 1.12.2004թ. դրությամբ կատարվել է 123812 հեկտար աշնանացան մշակաբույսերի ցանք, 2003թ. նույն ժամանակաշրջանի 109012 հեկտարի դիմաց կամ 14800 հեկտարով ավել:

**Աշնանացանի ընթացքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ**

*(հեկտար)*

| | 2004թ. | 2004թ. 2003թ. նկատմամբ, % |
|---|---|---|
| ք.Երևան | 80 | 38.1 |
| Արագածոտն | 10600 | 121.5 |
| Արարատ | 10945 | 110.1 |
| Արմավիր | 17000 | 113.3 |
| Գեղարքունիք | 15800 | 139.3 |
| Լոռի | 10913 | 112.8 |
| Կոտայք | 9664 | 105.8 |
| Շիրակ | 21381 | 93.0 |
| Սյունիք | 18549 | 138.9 |
| Վայոց ձոր | 1918 | 107.9 |
| Տավուշ | 6962 | 101.5 |
| **Ընդամենը ՀՀ** | 123812 | 113.6 |